ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա

<<30>> նոյեմբերի 2016 թվական Հոռոմ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ՀՈՌՈՄԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 17 -Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 12, <<Հոռոմի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը՝ 6 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմի գյուղապետարանի աշխատակազմի և <<Հոռոմի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմի գյուղապետարանի աշխատակազմի և <<Հոռոմի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2016 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Թ.Գասպարյան՝ կողմ ----------
Հ.Պապիկյան՝ կողմ ----------
Գ.Զատիկյան՝ կողմ ----------
Ս.Մելիքսեթյան՝ կողմ ----------
Ա.Մկրտչյան՝ կողմ ----------
Բ.Մկրտչյան՝ կողմ ----------
Զ.Մանուկյան՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ

«30» նոյեմբերի 2016 թվական
Հոռոմ համայնք